*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2010 թվականի N -Ա

## «ԲՆԱԿԱՆ ԵՎ ՀԵՂՈՒԿ ԳԱԶԸ ՈՐՊԵՍ ՇԱՐԺԻՉԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

համաձայնություն տալ «Բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը:

Զեկուցող՝ Արմեն Մովսիսյան

ոչ պաշտոնական թարգմանություն

Նախագիծ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով տրանսպորտային միջոցների շարժիչային վառելիքն այլընտրանքային վառելիքի տեսակներով հուսալի և երկարատև ապահովելու անհրաժեշտությունից՝ դրա հիման վրա իրականացնելով նաև բնապահպանական խնդիրներ,

ձգտելով Կողմերի տրանսպորտային միջոցների տեխնոլոգիական բարեփոխմանը և որակավորված մասնագետներով ապահովմանը,

հաշվի առնելով ԱՊՀ մասնակից պետությունների տարածքով անցնող տրանսպորտային միջանցքների ձևավորման և արդյունավետ շահագործման ապահովման համար համաձայնեցված քաղաքականության վարման հարցում ընդհանուր շահագրգռվածությունը,

հաշվի առնելով ԱՊՀ մասնակից պետություններում աշխատուժի միգրացիան, որն ավելի մեծ պահանջներ է ներկայացնում կադրերի պատրաստման համար,

հաշվի առնելով 2001 թվականի նոյեմբերի 29-ի ԱՊՀ կառավարությունների ղեկավար խորհրդի որոշմամբ հաստատված Անկախ Պետությունների Համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական միջավայրի ձևավորման հայեցակարգի իրականացման Միջպետական ծրագրի, ինչպես նաև՝ 2007 թվականի մայիսի 25-ի Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մասնագետների որակավորման բարձրացման և մասնագիտական

վերապատրաստման ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի դրույթները,

**համաձայնեցին ներքոնշյալի մասին.**

**Հոդված 1**

Սույն Համաձայնագրի նպատակն է աջակցել տրանսպորտային միջոցների համար բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու նպատակով մասնագետների պատրաստման, որակավորման բարձրացման և վերապատրաստման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների ազգային ծրագրերի իրականացմանը՝ այդ ոլորտի միասնական կրթական ծրագրերի մշակման և կիրառման, համատեղ ծրագրերի իրականացման մեխանիզմների մշակման և տեղեկատվության փոխանակման կազմակերպման հարցերում Կողմերի փոխհամաձայնեցված գործողությունների միջոցով:

**Հոդված 2**

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

**մասնագետների որակավորման բարձրացում** – լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, որն ուղղված է նախկինում ձեռք բերված մասնագիտական գիտելիքների, հմտությունների, ունակությունների ընդլայնմանը, խորացմանը և կատարելագործմանը, որի ուսումնական ժամանակի տևողությունը 2 ամբողջական ուսումնական շաբաթից կամ 72 ակադեմիական ժամից քիչ չէ և ավարտվում է ընդհանուր ատեստացիայով,

**մասնագետների մասնագիտական վերապատրաստում** - լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, որի ուսումնական ժամանակի տևողությունը 2 ամբողջական կիսամյակից կամ 1000 ակադեմիական ժամից քիչ չէ, իսկ արդյունքում չի փոխվում նախկինում ձեռք բերված կրթության մակարդակը, ավարտվում է ընդհանուր ատեստացիայով և շնորհվում է նոր մասնագիտական որակավորում,

**“Երկնագույն միջանցք”** – անդրսահմանային երթուղիների սահմանում, որտեղ բեռնատար և մարդատար փոխադրամիջոցների համար ստեղծված է վառելիքի լցակայանների ցանց, որպես շարժիչային վառելիք օգտագործելով բնական և հեղուկ

գազը՝ բնապահպանական դրությունը բարելավելու և միջպետական փոխադրումների տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,

**իրավասու մարմին** – մարմին, որը նշանակված է յուրաքանչյուր Կողմի կողմից սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված աշխատանքները համակարգելու համար։

**Հոդված 3**

Կողմերը միջոցներ են ձեռնարկում իրենց երկրների իրավական դաշտը և ուսումնական այն հաստատությունների լիցենզավորման գործընթացի որակի վերահսկումը կատարելագործելու համար, որոնք ապահովում են որակավորման բարձրացումը, մասնագետների մասնագիտական վերապատրաստումը և ատեստացիան, ինչպես նաև մասնագետների մասնագիտական վերապատրաստումն ապահովող ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը։

**Հոդված 4**

Կողմերը միջոցներ են ձեռնարկում բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրական դաշտերի մոտարկման համար։

**Հոդված 5**

Կողմերն աջակցում են բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում միասնական տեղեկատվական դաշտի ստեղծման, համաձայնեցված սկզբունքների մշակման և ատեստացիաների անցկացման գործընթացների իրականացմանը։

**Հոդված 6**

Կողմերը միջոցներ են ձեռնարկում պետական նմուշի այն փաստաթղթերը վավերական համարելու համար, որոնք հավաստում են բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու ոլորտում համապատասխան կրթությունը և տրված են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ուսումնական հաստատությունների կողմից։

**Հոդված 7**

Կողմերը կանոնավոր կերպով անց են կացնում աշխատանքային հանդիպումներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, գիտահետազոտական համաժողովներ և իրականացնում են տեղեկատվության փոխանակում առաջավոր գազային տեխնոլոգիաների կիրառման, տեխնիկական զինման, ենթակառուցվածքների վիճակի և դրանց օգտագործման ոլորտների, ինչպես նաև ավտոգազալցման ճնշակայանների կառուցման հեռանկարների մասին, այդ թվում նաև՝ “Երկնագույն միջանցք” ավտոմայրուղու վրա։

**Հոդված 8**

Կողմերը մասնակցում են բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում միջազգային կազմակերպությունների գործունեությանը, միջազգային նախագծերի և ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին։

**Հոդված 9**

Կողմերն աջակցում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների այն կազմակերպությունների միջև ուղիղ կապերի զարգացմանը, որոնք բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում ուսումնական ծառայություններ են տրամադրում, ինչպես նաև՝ այն կազմակերպությունների միջև, որոնք հետաքրքրված են նման ծառայությունների ձեռքբերմամբ։

Մատուցված ուսումնական ծառայությունների դիմաց վճարման կարգը և չափը սահմանվում է շահագրգիռ կազմակերպությունների միջև երկկողմ պայմանագրերի միջոցով։

**Հոդված 10**

Կողմերը փոխհամաձայնեցված միջոցներ են ձեռնարկում բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում միջազգային գիտաուսումնական կենտրոն ստեղծելու համար։

**Հոդված 11**

Սույն Համաձայնագիրը չի շոշափում յուրաքանչյուր Կողմի այն իրավունքները և պարտականությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակիցն է այդ Կողմը։

**Հոդված 12**

Ըստ Կողմերի փոխադարձ համաձայնության՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժան մասը կազմող առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով։

**Հոդված 13**

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների կամ Կողմերի փոխհամաձայնությամբ այլ գործընթացի միջոցով։

**Հոդված 14**

Սույն Համաձայնագրի իրագործման համար Կողմերը նշանակում են իրավասու մարմիններ և այդ մասին տեղեկացնում են ավանդապահին։

**Հոդված 15**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի իրականացման մասին երրորդ ծանուցումն ավանդապահին ի պահ փոխանցելու օրվանից։

Կողմերի համար, որոնք իրենց ներպետական ընթացակարգերն ավելի ուշ են իրականացրել, Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցագիրն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից։

**Հոդված 16**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է ԱՊՀ ցանկացած մասնակից պետության միանալու համար՝ այդ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու միջոցով։

Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից։

**Հոդված 17**

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով:

Այդ Կողմի համար Համաձայնագիրն ուժը կորցրած է համարվում համապատասխան ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից հետո 3 ամիս անց:

Կատարված է քաղաքում թվականի ------- -ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա վավերացված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից**

**Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից**

**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից**

**Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից**

**Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից**

**Մոլդովայի Հանրապետության կառավարության կողմից**

**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից**

**Տաջիկստանի Հանրապետության կառավարության կողմից**

**Թուրքմենստանի կառավարության կողմից**

**Ուզբեկստանի կառավարության կողմից**

## Ուկրաինայի կառավարության կողմից

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«Բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասինե համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

Անկախ Պետությունների Համագործակցության նավթի և գազի միջպետական խորհրդի (ՆԳՄԽ) նիստերի շրջանակներում բարձրացվել են տրանսպորտային միջոցների շարժիչային վառելիքն այլընտրանքային վառելիքի տեսակներով ապահովելու, ինչպես նաև շարժիչային այլընտրանքային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում միջազգային գիտաուսումնական կենտրոն ստեղծելու հարցերը։ 2007 թվականի հունիսի 7-ի՝ ՆԳՄԽ 11-րդ նիստի արձանագրությամբ ամրագրվել էր «Բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասինե համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախապատրաստման առաջարկը։ 2009 թվականին Համաձայնագրի նախագիծը ներկայացվել է ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների քննարկմանը։ 2010թ. մարտի 5-ի՝ ԱՊՀ տնտեսական խորհրդի որոշմամբ հավանություն է տրվել Համաձայնագրի նախագծին։

Համաձայնագրի հիմնական նպատակն է աջակցել տրանսպորտային միջոցների համար բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու նպատակով մասնագետների պատրաստման, որակավորման բարձրացման և վերապատրաստման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների ազգային ծրագրերի իրականացմանը, որոնք նախատեսվում է իրականացնել Համաձայնագրի մասնակից կողմերի (այսուհետ՝ կողմեր) փոխհամաձայնեցված գործողությունների միջոցով՝ նշված ոլորտում մշակելով և կիրառելով միասնական կրթական ծրագրեր, համատեղ ծրագրերի իրականացման մեխանիզմներ և կազմակերպելով տեղեկատվության փոխանակում։

Ըստ Համաձայնագրի՝ կողմերը միջոցներ են ձեռնարկելու իրենց երկրների իրավական դաշտը և համապատասխան ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացի որակի վերահսկումը կատարելագործելու համար, ինչպես նաև մոտարկելու են բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում կողմերի օրենսդրական դաշտերը։

Համաձայնագրի դրույթներով ամրագրված է, որ կողմերը վավերական են համարելու բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու ոլորտում համապատասխան կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթերը, որոնք տրված են Համաձայնագրի մասնակից պետությունների ուսումնական հաստատությունների կողմից։

Համաձայնագրի դրույթներով նախատեսված է, որ կողմերն աջակցելու են մասնակից պետությունների բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում ուսումնական ծառայություններ տրամադրող, ինչպես նաև նման ծառայությունների ձեռքբերմամբ հետաքրքրված կազմակերպությունների միջև ուղիղ կապերի զարգացմանը։ Մատուցված ուսումնական ծառայությունների դիմաց վճարման կարգը և չափը սահմանվելու է շահագրգիռ կազմակերպությունների միջև երկկողմ պայմանագրերի միջոցով։

Համաձայնագրի հիման վրա կողմերը կանոնավոր կերպով անց են կացնելու աշխատանքային հանդիպումներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, գիտահետազոտական համաժողովներ,

իրականացնելու են տեղեկատվության փոխանակում առաջավոր գազային տեխնոլոգիաների կիրառման, տեխնիկական զինման, ենթակառուցվածքների վիճակի և դրանց օգտագործման ոլորտների, ինչպես նաև ավտոգազալցման ճնշակայանների կառուցման հեռանկարների մասին:

Համաձայնագրով նախատեսվում է, որ կողմերը միջոցներ են ձեռնարկելու բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում միջազգային գիտաուսումնական կենտրոն ստեղծելու համար, ինչպես նաև մասնակցելու են նշված ոլորտում միջազգային կազմակերպությունների գործունեությանը, միջազգային նախագծերի և ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին:

Համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով կողմերը նշանակելու են իրավասու մարմիններ:

Համաձայնագիրը ստորագրվելու է ռուսերեն լեզվով, մեկ բնօրինակով: Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է ԱՊՀ մասնակից պետությունների միանալու համար:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի իրականացման մասին երրորդ ծանուցումն ավանդապահին ի պահ փոխանցելու օրվանից, իսկ այն Կողմերի համար, որոնք ներպետական ընթացակարգերն ուշ են իրականացրել՝ համապատասխան ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասինե ՀՀ օրենքի դրույթներով և հաշվի առնելով տրանսպորտային միջոցների շարժիչային վառելիքն այլընտրանքային վառելիքի տեսակներով հուսալի և երկարատև ապահովելու անհրաժեշտությունը, դրա հիման վրա իրականացնելով նաև բնապահպանական խնդիրներ՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար է գտնում «Բնական և հեղուկ գազը որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ոլորտում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասինե համաձայնագրի ստորագրումը:

**ՀՀ էներգետիկայի և բնական**
**պաշարների նախարար** **Ա. Մովսիսյան**

21.04.2010թ.